

ԽԱՐԱԿԱՆ

ԳԱԻԱՌԱՑԻՆԵՐՈՒ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԸ

Ա. ՏԱՐԻ

30 ՄԱՐՏ 1912

ԹԻԻ 12

Խմբագրապետ
Մ. ԻՓԷՔՃԵԱՆ

Արտոնահատ
Հ. ԹԱՊԻՊԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընտրություններ եւ Օսմ. փարլամենթը
Հովուունիք (բանաս.)
Երաժշտութեան պակասը դպրոցներուն մէջ
Հայրենի հառաջներ (բանաս.)
Ինչ կ'ընէ Ամասիոյ երիտա արդուքները
Մեծ մարդը (քաղվ.)
Աւստրիոյ յեղափոխական մեծ շարժումները
Գաւառային կուրեր

Մ. ԻՓԷՔՃԵԱՆ
ԱՐՄԷՆ-ԵՐԿԱԹ
ՄԻՆԳ
ԳՐ. Հ. ՇԱՀՆՈՒՐ
ԱՆԴՐԱՆԻԿ ՃԷՎԻՋԵԱՆ
Գ. ԷՍՄԷՐԵԱՆ
ԹԱԳԷՈՍ ԺԱՄԿՈՉԵԱՆ

ՎԵՐՋԻՆ ԱԶԴ

ՄԵՐ ԲՈՒՐՔ ԲԱԺ ԸՆԹՐՆԵՐՈՒՆ ՈՒ ԴՈՐԾՊԱԼՆԵՐՈՒՆ

Այս թիով թերեք իր առաջին վեցամսեան լրացելով Բ.ին կ'սկսի յաջորդ թիով՝ Տա՛ւալին կը գտնուին տղայիս անհասներ որ հակառակ մեր յայտարարութիւններուն մինչեւ 11րդ. թիւը ստանալէ յետոյ կ'ելենք թերք եւ կը վերադարձնեն, ասկէ վերջ այդպիսիներուն անունները առանց բացատրեան պիտի հրատարակենք. Նաեւ «պատժող» սիւնակ մը պիտի բանա՞նք այն բաժանորդներուն ու դորձակալներուն, որոնք մինչեւ 13րդ. թիւը ստանալը իրենց բոլոր հաշիւները չեն մաքրեր:

ԱՄԱՍԻԱ

Տպագր. ՅՈՎ.ՆԱՆԵԱՆ ԵՒ ԵԱՐՏԸՄԵԱՆ

«ԱՄԱՍԻԱ» ՀԱՍՑԷՆ

آماسیه ده «آماسیه» غزنه سی مدیریت

Խմբագրության «ԱՄԱՍԻԱ» Կիսանսեսայ հանդեսի- Ամասիա
Rédaction de la Revue «AMASSIA», a Amassia (Turquie d'Asie)

ԱՄԱՍԻԱ

Կը հրատարակուի ամէն ամսու 1ին եւ 15ին, քուրբերէն եւ հայերէն
բաժիններով: Թուրքերէն բաժինը մօտաւորապէս 4 էջ, իսկ հայերէնը 12
էջ. երկու բաժինը միասին միշտ 16 էջ պիտի ըլլայ: Բաժանորդներուն
սարեկան 24 քիւ պիտի տրուի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թուրքիա սարեկան	1 մեծիս	Արսաւսահանսի սարեկան	5 քր.
» վեցամսեայ	0.50 »	» վեցամսեայ	2.50 »

Բաժնեցիկը քաջարձակապէս կանխիկ է: Ծանուցումներու համար ա-
ռանձին նպաստաւոր տրամադրութիւն կը տրուի:

Տասը օրինակ «Ամասիա» սպառողին մէկ օրինակ նուիր:

Լոյս տեսաւ

ՆՈՐ ԱՇԽԱՐՀ Օրաթերթը

ՔԱՂԱՔՒԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ԿԻՐԱՊԱՆԴՈՐԱԿԱՆ ՕՐԱԿԱՆ Ս. Դ. ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԻՐԱՊԱՆԴՈՐԱԿԱՆ

Պիտի աշխատեցնեն Հնչակեան 15 է աւելի մտաւորական կարող ոյժեր. որոնք իրենց
հեղինակաւոր նշանադրութիւնով ծանօթ են հրապարակի ներկայ կարեւոր խիստ կա-
րեւոր պոկաս մը լրացնելու սահմանուած է: Կը թելադրենք բոլոր ազգայինները որ օգ-
տուին, անոր ունենալիք նոյն ու գիտական բովանդակութեան:

Պայմաններ՝ Պօլսոյ եւ Դաւաթներու համար սարեկան 80 դր.

վեցամսեայ 45 »

եռամսեայ 25 »

Հասցէ՝ Վարչութիւն «Նոր Աշխարհի»


Կ. Պօլիս Բերա պեհար փողոց քիւ 20

ԴԱՅԷԱՅԼԻԿ

Գեղարուեստական կիսամսեայ.

Տէր եւ Տնօրէն Հմայեակ Արամեանց: Հասցէ՝ Կ. Պօլիս բօսարկը քիւ 125:

Դալլալիկի իւրաքանչիւր քիւր պիտի բաղկանայ 60 էջերէ, 30 պոստիւրով, 30 նօ-
թանքով եւ բազմաթիւ երգերով: Դալլալիկի նպատակն է խնամով հաւաքել, ամփո-
փել, ձայնագրել եւ հրապարակել Յեղափոխական, Սօցիալ իրական, Ազգային, Միջազ-
գային եւ ժողովրդային հասցնիք երգերն ու դիւցազներգութիւնները, որոնց հեղինակ-
ներուն պատկերներն ալ պիտի հրատարակուին, ինչպէս նաեւ անոնց՝ որոնց ձօնուած են
երգերը: Ա. քիւր լոյս պիտի տեսնէ 1942 Մարտի վերջերը: Բաժնեցիկն է սարեկան (20
քիւ) 20 եւ վեցամսեայ 45 դր. Բաժանորդագրութիւնն անպարտաւ կանխիկ է: Կը յանձ-
նարարենք բոլոր գեղարուեստաւորներուն:



ԳԱԽԱՌԱՑԻՆԵՐՈՒ
ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍՐ

Ա. ՏԱՐԻ

30 ՄԱՐՏ 1912

ԹԻՒ 12

ԽԱՐԱԳՐԱԿԱՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԵՒ

ՕՍՄԱՆԵԱՆ ՓԱՐԼԱՄԵՆԹԸ

Ամեն կողմերէ եկած լուրերէ կը տեղեկանան թէ Իթթիհատականները շահած են ընտրական պայքարին մէջ, և դարձեալ թերթերէ կը յայտնուի յայնպիսի լուրեր ընտրական գեղձումներու, կողմնակցութեանց և եղբուն տեղեր ալ մահացու բաղխումներու մասին որոնք մեզ կը մզեն անգամ մի ևս անդրադառնալ կատարուած իրողութիւններու շուրջ:

Նախ կը փորձուինք խորհելու թէ ի՞նչ է պատճառը որ ամէն տեղ Իթթիհատականները շահեցան երբ յայնքան բուռն քննադատութիւններ ու ժողովրդային դժգոհութիւններ կային տիրող կուտակցութեան գործելակերպին մասին: Արդիւնքն մեզ կը մղէ խորհիլ թէ իրոր Իթթիհատ ժողովրդային համակրութեան պատճառաւ շահեցաւ, մենք դրականօրէն կրնանք պատասխանել այս մասին թէ իրեն հետ գործող ոյժերը, և նոյնիսկ իրեն ետեւէն քարշ տուած փարթիկներն իսկ կը քննադատէին զինք. և չեմ կրնար խորհիլ թէ ներկայիս մէջ ալ կը դադրին քննադատելէ հիմնական կէտերու մէջ և սկզբունքի տեսակէտէն, քանի որ գոյութիւն ունին աչք ծակող զեղծում:

ներ և էնթրէքներ: Սակայն այս բոլորը թէ ժողովուրդը և թէ բարձրներ
 զիտնալով հանդերձ գային և միայնան իմթիհատի ոչ թէ զայն հանձնալով
 երկրին: օգտակար ուղղութիւն տուող հիւսուկցութեան մը: այլ որովհետեւ
 ներկայ կառավարական կազմը իմթիհատական էր, ոյժը իր կողմն էր, և
 միամտորէն ուղեցին շահագործել այդ ոյժը ի նպատակ իրենց անձին կամ
 փաթթիին: Հոս հարցում մը պէտք կ'զգանք ընել, Օսմ. հոյսենիքի տմբոյ-
 ջութեան վնասակար նկատում ուժերը պէ՞տք է մեզ պատասխարեն համակեր-
 պելու անոնց: Պատասխանը շատ որոշ է, և ով որ ասոր հակառակը կը յան-
 դրդնի պնդելու՝ հայրենիքի շահերը չէ որ կը հետապնդէ. եթէ վնասակար
 ոյժի հետ համերաշխիլ արգարացի կը գտնէ որեւէ մէկը՝ մենք անոր կը պա-
 տասխանենք թէ համիտ ևս պատկառելի ոյժ մէր և անոր հետ զործակցոյց-
 ներն ևս մեղադրելի չեն, քանի որ ան էր այն ատենուան կացութեան տէ-
 րը: Ինչու էին այն յեղափոխական շարժումները, այն անհուսալ կռիւ-
 ները, այն հերոսական մարտնչումները, որովհետեւ ամենք ժողովրդային
 օսմերէ չէին բղխեր: Արդ ի՞նչ է պատճառը որ իրենց համար հերոսական
 սխուեռ տալ ուղող անձինք և բարձրներ իրենց գիրքին վրայ չի կրցին մնալ
 և անդի տալին ոյժի առջև ըսի այն առարկութեամբ թէ անանք, «Իմթիհա-
 տը միայն կրնայ ապահովել հայ կամ քրիստոնեայ երեստոնաները»

Այժմ դանք այն կէտին թէ եթէ ապահովեն իսկ ի՞նչ օգտակարութիւն
 պիտի տային անանք: Նախորդ շրջանի փորձառութիւնը ցոյց տուաւ մեզի
 թէ ընդգիմագիր ոյժեր գոյութիւն ունեցած պահան իսկ, քրիստոնեայ երես-
 փոխաններ չի կրցաւ իրենց հետապնդած պարզ մը խնդիրները քուէադիկ
 տալ քանի որ սկզբունքով իմթիհատի հակառակ էր, և եղաւ պարագայ
 մալ, որ նոյն իսկ ընդգիմագիրներ վայրկենապէս միայն իմթիհատի հետ
 և քուէադիկէին Գրիսորիաններու ղեկավարութիւնը, անոնց բուն բողոքին կա-
 րևորութիւն: անգամ չի տալով, ու անհետանք թողելով: Այդ պէտք է
 խորհիլ այժմ թէ մեր շահը ո՞չ թէ մշակն շատ թիւով երեստոնան ունենա-
 լուն մէջն է, այլ սկզբունքով մեր և օսմ. երկրին շահերը հետապնդող և այդ
 իրեն համար ինք սկզբունք ընդգրկող հիւսուկցութեան մը հետ միանալն է:
 Իմթիհատը իր ծրագրով տնի՞ այդ, և իր չուտ տարուան գլխակիւղող
 մեզ վնասաւթիւն կը ներշնչէ. — ոչ հետեալաբար երեստոնական ժողովի
 մէջ նոյն շահերէ և նոյն սկզբունքներէ առաջնորդուող հիւսուկցութիւնը ո՞վ
 ոչ էր անոր հետ զործակցիլ անոր առ տալ և անոր զօրեղացման նպատակը
 կը նշանակէր: հայ շահերուն ոյժ տալ. իսկ ո՞վ որ ասոր հակառակ ուղղու-
 թեան կը հետնէր, չի քաշուինք յանելու թէ հայ շահերը հետապնդելէ աւել-
 լի անոր վնասուելուն պատճառ պիտի դառնար և այնպէս ալ պիտի ըլլայ
 ապահովաբար: Համիտեան բռնութեանն չի քաշուող ուժեր ի՞նչպէս զոհեցին
 իրենց սկզբունքները ըսի ուժի համար:

Ամասիոյ չրջանի ընտրութիւնները թեպետ չի լրացաւ ամբողջապէս սակայն որոշ է թէ որոնք են մեր յաջորդ չրջանի երեսփոխանները: Եւ երբ Իթթիհատը որ յանուն հայրենիքի կը դործէ և Իսմայիլ Հազըր փաշայի և Փրոֆ. Թումանեանի նման անձեր մէկ կողմ կը թողու և կ'ընտրէ ներկայ նորեկ երեսփոխանները Հասան էֆ. և Հաֆը Մասաֆա էֆ. որոնց անձը յարգելով հանդերձ պարտք կ'զգանք ըսել թէ երեսփոխանութեան ոչ մէկ յարմարութիւն կը ներկայացնեն, և չեն կրնար բաղդատուիլ իսկ, Իսմայիլ Հազըր փաշայի և Փրոֆ. Թումանեանի հետ: Եւ խորհիլ թէ այս նստաշրջանը պիտի կազմեն այսպիսի երեսփոխաններ որոնք առաւելութիւն ունին միայն Իթթիհատի մեքենային մէկ մասը կազմէլու: Եւ ահա այս կազմին մէջ դրնել 10. կամ 15 հայ երեսփոխաններ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով պարտական են Իթթիհատի բարեացակամութեան, ի՞նչ արդիւնք կըրնան տալ երբ զիրենք կառավարողը ո՛չ թէ հայրենիքի շահն է, այլ Իթթիհատի շահը. և Իթթիհատը նաեւ ի՞նչ կրնայ օգտուիլ այս կազմէն՝ քանի որ իր հրահանգներուն հըռ դործադրիչները պիտի ըլլան անոնք:

Այս բոլորը պարզելէ յետոյ պէտք կ'զգանք ըսել նաեւ թէ Իթթիհատը իբր զեկալարող այդ եթէ ընտրական չրջանին մէջ գործուած ուղղութենէն բոլորովին տարբեր ուղղութեամբ մը չի կառավարուի և գործադիր իշխանութիւնը չեղոր դիւրի մէջ չի մնայ, և չի լսէ բողոքները, քննադատութիւնները. և երբ լայնախոհ ազատամտութեամբ մը չի վերաբերուի պէտքի ընդդիմադիր պիտի ըլլան ատեն ժողովրդային արդար զայրոյթին և բողոքին առջև. անկարող կ'զգայ ինքզինք: Եւ ո՞վ պիտի ըլլայ պատասխանատուն . . . :

ՍԻՆԱՍ ԻՓԷՔՃԵԱՆ

Հ Ո Վ Ո Ւ Ո Ւ Հ Ի Ն

Հովուուհին ե. կապոյտ աչքով հովուուհին՝
Որ կը դառնայ վերջալոյսին տակ գարնան,
Նուրբ մազերը ցիրուցան իր ուսերին
Եւ սրբիմզի հրնչիւնին սէր սիրական:

Ըսէ՛ք որ ան, այն գեղեցիկ հովուուհին
Ուռենիի ուսեր բերէ ինձ համար,
Ուռիները հեռուն, հիւռուն կուլային
Աչկերուս պէս՝ որ ալ ժպիլ չեն կրնար.

Ըսէ՛ք որ ան, այն չար սիրով հովուուհին
Սրբիս համար ծաղիկ բերէ սարեւն,
Ա՛խ, քսէ՛ք որ յուսալ չուզեր իմ հոգին,
Որ երազներս մեկիկ մեկիկ մարեր են . . . :

Բայց ան կուգայ, հովուուհին ե՛ք որ կուգայ՝
Իր հոսին հետ ուռենիի ուսերով:
Ծաղիկներով եւ յոյսերով կը դառնայ,
Սրբիս համար գարուններով, երգերով . . .

ԱՐՄԷՆ ԵՐԿԱՐ



ԵՐԱԺՇՆՈՒԹԵԱՆ ՊԱԿԱՍԸ ԴՊՐՈՅՆԵՐՈՒ ՄԵԶ

Կը զգամ թէ որչափ մեծ բարիք մը պիտի ուղարկեմ, եթէ մեր զպրօքները կտրու-
ւորուեցին ասոյն երաժշտութեան դասին, որ ինքնին անհրաժեշտ մէկ մասը կը կազմէ բարոյական առաջը զատարարութեան:

Մեր զպրօքները մտքի, բարոյականի ներդաշնակ զարգացման համար՝ անհրաժեշտ պէտք ունին ձայնական թէ գործիական երաժշտութեան: աշակերտի մը նիւթական սէրը կը սպասէ երաժշտական սեէ գործիքի մը, պարագայ մը, որ այնքան կրնայ նպաստել ենթակային մաքուր միջակայքի մէջ մնալուն, որով արդէն չհարցադաշտ կ'ըլլայ արձարանի և փոքրիկ բնակիչներու միտարարութեան:

Ետեւ պարսկականի կը թուի ինքի, թէ ինչո՞ւ արդեօք շատ մը զպրօքներու մէջ, երաժշտութեան կենսաբան ներդաշնակութեանով չեն մտադաներ աշակերտներուն միտքն ու հոգին:

Մանկական կեանքը երգ, պար, խօսք ու խաղ է համար: Եթէ ան բարձր չի գտնուի, իր այդ շատ բնական պահանջին զոհադաշտ պիտի տայ գէշը քնդօրինակութիւն: Եւ արդէն դաւառի զպրօքներուն երաժշտութեան հանդէպ սենեկում անտարբերութիւնն է պատճառը, որ մեր բարքերուն մէջ մտած է իրքական մեղկացող նոյն երաժշտութեան յոսի ազդեցութիւնը: ազդեցութիւն մը, որ այնքան յաւաքին օրէն խախտուած է նաեւ մեր մաստաղ սերունդին կարճատեւ ու անապարտ հոգին: Գիտեմ աշխարհի աշակերտներ, որքանք տանին զգալու և արտայայտելու տալանդ, սակայն չունին զայն զարգացնելու մոտիկներ, որով փճացուցած են իրենց այդ կարողութիւնը, իրքական վտանգաւոր ու աւելիք երաժշտութեան հետ տեսելով: Հետզհետէ ճոխացած ու նորա-

ցած եւրոպական երաժշտութիւնը մեղմ, շտապեան մէջ կը մնայ ամուլ ու անհիւսիս, որովհետեւ ժողովուրդը չի՞ սիրեր, չի՞ քաջալերեր եւրոպական երաժշտութիւնը և զիստակցին՝ կը նախատէ ու կ'արհամարհէ զայն: Թմբուկի մը ազմեայոյց թափիւնը աւելի կը յազէ զայն, քան Մոցարտի մը հառաժողովը (Sonate): Իսկ ինչո՞վ մեղաւոր է ասոր մէջ ժողովուրդը: Չէ՞ որ զպրօքը պիտի մշակէ եւրոպական երաժշտութեան ճաշակը մեր մէջ:

Իսկ ներկայ զպրօքը կը գտնուի՞ արդեօք իր կոչման բարձրութեան վրայ: Գիտե՞մ արդեօք թէ աշակերտներ ինչպիսի երաժշտութիւն մը կը մշակեն: Ափսոս, որ անոնց մշակած երաժշտութիւնը հետեւ է բոլորովին զոհադաշտ տալէ իրենց հոգի-
կան կեանքի պահանջներուն, հետեւ է խօսելէ իրենց զգալունմեկուն, թէպէտ ունին զգալու և արտայայտելու առաւելութիւնները, սակայն անոնք կը մարին իրքական ճաշակի անիմաստ խաղերուն մէջ, և իրենց մէջ կը ծագի արհամարհանք մը, եւրոպական նոր մտքերու և նոր ուղղութիւններու հանդէպ:

Որչափ ատեն որ զպրօքները խնային իրենց օգնութիւնը՝ մշակելու համար երաժշտութեան արտաւարտ աշակերտներուն մէջ, այնչափ ատեն կարող պիտի չ'ըլլանք ըմբռնելու եւրոպական երաժշտութիւնը, Մոցարտի հառաժողովները (sonate) Պէթովենի համերգները (symphonie), Պէլլինի «Նորման» Վէրաի «Թրովաթուրէն» եւ այլն:

Այս, յուսահատական է մեր գրութիւնը եթէ զպրօքները չ'արթննան իրենց այդ ոճրապարտ քունէն և չի ձգտին ազնուացնել աշակերտութեան միտքն ու հոգին՝ ձայներու աշխարհին վսեմ ներդաշնակութիւնովը:

ՀԱՅՐԵՆԻ ՀՍՈԱԶՆԵՐ

Ուր եր գեփիւոն իմ հայրենի
Ուր խոկն ճակսիս ի բաց ցրուէր,
Երբ քնարով՝ ուր կարօսի
Կ'երգէի վիսս հայրենանուէր:

Ինչո՞ւ սոխակն իմ ցանկալի
Չմնաղագոյն վարդին ի սեւ,
Կ'երգէ լսկ սերն իւր սխալի,
Մինչ սուգ ունի հայրենիս վիս:

Ուր եր գեփիւոն իմ ցանկալի
Քր խոկն ճակսիս ի բաց ցրուէր,
Երբ քնարովս ուր, կարօսի՝
Կ'երգէի վիսս հայրենանուէր:

Զօրում

ԳՐ. Զ. ՇԱՀՆՈՒՐ

Ո՛ր բ'եր ինծի, բե՛ր անխններն
Ինկածներո՛ւն եղբրամահ,
Որով օծեմ քնարիս քելերն՝
Սուրբ պարտւում մի հոգեծնայ:
Ո՛ւր եմ յետին հառաչներն ուն
Հայրենիքիս հերոսներն,
Որո՞նք հողին մեջ քաղաւեցան
Յոյսի զարեան մեջ երազուն...

Ի՞նչ Կ'ԸՆԷ ԱՄԱՍԻՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Մարդ բնական փափաք մը կը զգայ իր ծննդավայրէն դուրս գտնուած ասան լաւագոյն տեղեկութիւններ տոնելու կամ կարգաւու անոր վրայով: Իմ մասին այս փափաքը խիստ բուռն է կուրծքիս տակ և ամէն անգամ որ թղթաբերէն կը ստանամ «Ամասիայ» տնօրէնական տար վերջին էջերը կը բռնամ գիտնալու համար թէ ինչ զարձած անցած է վերջին կիտմանէն Ամասիայ մէջ: Գիտազգայար ոչ մի սերահառաքի պարագայ չկաւ ինձ կարելի նշմարել յարգ տալիս օրինակներու մէջ:

Ես այս իրողութեանց առջև կը բռնուիմ մասածել թէ կամ այն է՝ որ մեծ տեղութիւն կը տիրէ քաղաքին մէջ կամ այն է՝ եղած շարեւմանը չարձանագրել «Ամասիայ»:

Յաճախ Գարաշիսարի բարեկամներ կը հարցան ինձ թէ Ամասիա քաղաքը հակառակ իրեն հարգուող բնակչութեան, կրթական լաւագոյն պլաններն, միջոցներուն զիւրութեան, մեծ ճանապարհի վրայ գտնուելուն, այսօր ճակատարաց չի ներկայանար իր ազգային կուլտուրական,

առաջնորդական, իգական բարեշնչումի եւն. վիճակներուն մէջ: Ինչպէս կ'ըլլայ արդեօք այս: Միթէ Ամասիայ մէջ երկրորդութիւն չկայ: Ամօթէս կը կարմրեմ և խռոտափողական պատասխանով մէջ Կանցիւրի:

Գաւառներու շարքին զարաշիսարցին իրաւունքը ստացաւ վերջին երկու տարուան մէջ՝ անկեղծ պարծանքով մը յայտնելու այդ զարմանքը իր կուլտին ապրող հայրենակիցներու համար թէ միթէ նոն երիտասարդ չկայ: Այո՛, այս քաղաքի հայ բնակչութիւնը իր ազգային և ընտանեկան կեանքերով տակաւին երկու տարի առաջ Ամասիայ տակէ 20 - 30 տարի առաջուայ վիճակը ունէր. զարթնեց իր թափով, կատարեց վճարական ստուգմը և յառաջ եկաւ այսօրուան մեծ բարեշնչումը: Ազգային գործերու մէջ կամայականութիւնը տեղի սուտ անյետադարձօրէն, ուսուցչութիւնը ստացաւ իր վայել դիրքը, արթնցաւ բնութեան, ինքնազարգացման, թոտարուն հանդէպ լաւագոյն փափաք մը. կ'ընը

դուրս եկաւ 7 վարագոյններու ետեւէն, մասա հասարակական կեանքին մէջ ստանալով հոն իր բաժինը: Այս 7 վարագոյններու ետեւ պահուող կիներ պատուեց զանաւնք, յառաջացաւ դէպ 'ի զըզրոց, հանդէսներու, թատրոններու ներկայ զանուելէ յետոյ յանկարծ ցաթֆեյ բեմին վրայ վերջ տալով այսպէս իր սեռը կեղծող ազամարդերու սննդական ներկայութեան: Փարահիսարցի երիտասարդութիւնը կը գործէ միշտ և լաւ. և բնական է ցաւք պիտի դիտէ այն միջավայրերը ուր նիւթական աւելի լայն միջոցներ կան, ուր աւագին ինքով երիտասարդութիւն կայ, ուր յարաբերութեան միջոցները աւելի ձեւատու են:

Ազգային ներքին կաշառքական զարգացման համար շատ տեղեր բանաստղարութիւնէն յետոյ ճշմարիտ շարժում մը տեսնելու և խաւարի մէջ հասող ժողովարդը աչքը բացաւ ու լոյս տեսաւ. շատ տեղեր այ սահմանադրութիւնէն յետոյ ոչ խառնութեան, զարգացման եռանդը մտրելու դատարարութեամբ: Սրբարեւ Ամասիայ համար արարմանքով կարելի է յիշել սահմանադրութիւնէն առաջ իր ունեցած զարգացական ձգտումները: 1888ը թուականին կաշմուած զարգացալիցը և իր յոտուկ վարժարանը այն միակ ընկերակցութիւնը և կրթական յարկը եղան Ահաթիոյ մէջ որ երբէք գոյութիւն ունեցան. մասա սոյն ալ ընկերակցութեան ծրագիրը ու իրեն վարժարանին ուսմանց յայտագիրը որոնք այսօրուան իրականին մէջ խկապէս մշակող՝ ազգային միջոցներով մոտակարարութեամբ ոչ մէկ զարգաց կայ: Եւ այ կը հարցնեմ Փարահիսարցի բարեկամներու հետ ինչ կ'ընէ օրուան Ամասիայի երիտասարդութիւնը քանի որ արար քառորդ դուր առաջուայ զարգացական աշխատանքին կիսով չափ գէթ համալսարանները աշխատանք մը չի համարուելի հոն: Ինչ կ'ընեն յիշեալ զըզ-

րոցալիսարցի սաները որոնք մասալիսարան, թէ և քանակով նուազ՝ բայց, սրտով տանէն ուսման տարրերը պէտք էին լրաց:

Փարահիսարի բուն խորհուրդ աւ գործադրող այժմ փոքրիկ թիւ մը ներկայացնելով հանդերձ իր հրաշայի արդիւնաշէրութիւնը և Ամասիայ մէջ այնքան ստաւարութեամբ երիտասարդութիւն մը կենալով հետ մէկտեղ հոն իրարու զուէր պատուէ զատ ոչ մէկ գործունէութիւն ցոյց տրուելը ինքի համար հանկուղ կը գտնուի պարզապէս: Եւ այս անարշուքութիւնէն զուրս գալու համար, մի գուցէ, կը խորհիմ, կուսակցական վեճեր յառաջդիմութեան սնիւր կոտեցուցած ըլլան: Մինչդեռ անոնք մշակելով հանդերձ ստանձնելն իրենց կուսակցական միջին հայեացքները, պարտաւոր էին համարել իրական գոյ, ժողովուրդի վերամշակման գործին մէջ ջանք չի խնայել որ առաջնորդարանը ազատութիւն աշայական կամայականութիւնէ, զարգացներ կանոնաւոր և յարաճուն պիւտեմով մատակարարութիւն, կին էտկը զուրս գայ իր ստրկական վիճակէն, երկուսն գտն բանուարական միութիւններ, ժողովուրդը զարգանայ բարոյապէս, կուստուրապէս, և անասապէս:

Մնանդի կախները մեր արդէն խիստ խոր վերքերը խոչորցնելէ զատ ուրիշ բանի չեն ծառայիր: Ընդ ոչ թէ միայն խոցաւ անհետանալու աստիճան գործունակութեւնը մեր այդ վերքերը, այլ նոյն խոց մեղ հասցնելու ենք լաւագոյն վիճակի մը ուր այդ վերքերուն սպին անգամ չ'երկուայ: Ոչ թէ կախները այլ աննպատակ վեճերը նոյնիսկ գործերու ընթացքը կոտեցնելէ զատ ուրիշ բանի չեն ծառայիր: Ընդդէմ անք ուրիշ ունէ տանէ աւելի պէտք տեսնելու ենք զարգացման: Եւ որովհետեւ խիստ յաճախ առաջնորդարանն ու զարգացն են որ տխուր ժամադրութեամբ կ'գտնան մեր կախներուն, քիչ մը խոհեմ ըլլալ կը բուռէ համարալու համար

Թէ մենք մեր գոյաթիւան կուսաններն են որ կը կործանենք ապրտաբար. եթէ չենք մեղքնաւոր մեր այս վէճերով ունեցած անհաստատուն կորուստներուն գէթ խղճանք տոյն սերունդին վրայ որ մեր յաջորդը ըլլալու կոչում ունի:

Գործել ու յատաջդիմել. այս է որուն պահանջը. չարժուինները իրենց իտէպը պէտք են ունենալ զարգացումը: Իրաւունքը կուտամ ինքզինքիս կող ընկու Ամասիացի երիտասարդութեան, հրաւիրելու որ հետեին իրենք իրենց քառորդ զար աւաջուայ հայրերուն կամ մեծ եղբայրներու այնքան եռանդուն ընթացքին. չարժին ու գործեն յօգուտ ընկերական, ընտանեկան և կրթական յառաջդիմութեան ու բնի չի տան անգամ մըն ալ ուրիշներուն՝ «մեռելի հող ցանուած է Ամասիոյ երիտասարդութեան վրայ»: Այս

Ն. Գարանիսար

խոսքը նետուած էր իրենց ճակտին տնցորդի մը կողմէն սակէ չորս տարի տառջ, չ'էին մարտած և պատասխանած էին հրապարակաւ. սակայն իրողութիւնը կուգայ հրապարակելու որ գործնական ոչ մի սրդիւնք չ'եկաւ. հերքելու այդ խօսքը կամ իրենց ճակատներէն սրբելու այդ մտքը: Ինչպէս վերեւ ըսինք ֆէմինիզմի հասկընդունած ընկերական կեանքի, բարձրագոյն նախակրթութեան չգոյութիւնը Զաւիշախիչ փաստեր են հաստատող, ինչ որ բուսած է, Ամասիոյ երիտասարդութեան հոգեբանութեան մասին:

Ես կը հրաւիրեմ այս՝ իմ հայրենակիցները որ առանց ցաւ զգալու այս գիտողութիւններէն իրենց նոր եռանդով, միացեալ ուժով երեւան գան գործնական նապէս հաստատելու որ թողած են իրենցից մեռելի պատանքները:

ԱՆԴՐԱՆԻԿ ՃԵՎԻՋԵԱՆ

ՄԵԾ ՄԱՐԴԸ

Մեծ մարդու մը կեանքին մէջ երկու կողմեր կան, ան երկու գեր կը կատարէ, իր տապաւնէզին մէջ երկու ժամանակաշրջաններ կրնան նշանակուիլ:

Ան ուրիշներէ աւելի լաւ կրնայ հասկնալ իր ժամանակին իրական ու գործնական պէտքերը, ու նաեւ ինչ որ պէտք է իրեն ժամանակակից ընկերութեան ապրելու և կանոնաւոր զարգացման համար: Ուրիշներուն չափ լաւ գիտէ նաեւ նուաճել բոլոր ընկերական ոյժերը վարելու համար գէպի այդ նպատակը: Ասկէ ծագում կ'առնեն իր կարողութիւնն ու փութքը, ու այդ խիստ պատճառով, երբոր ինք հրապարակ գայ, իր ըսածները կը հասկցուին, կ'ընդունուին, հետեողներ կ'ունենան, և կ'աշխատին այն գործին զոր նա ի նպատակ հանրութեան կը վարէ:

Բայց ան հոս կանգ չառնէր. իր ժամանակին իրական և ընդհանուր պէտքերուն հազիւ թէ զոհացում տրուած, մեծ

մարդուն մտածումն ու կամքը աւելի հետու կը ձգտին: Ան կը խոյանայ այժմէական իրողութիւններէ դուրս, անձնատուր կ'ըլլայ իր անհատական տեսութիւններուն, ախորժ կ'զգայ աւելի կամ նուազ իրաւանման կարգադրութիւններէն (combinaison), որոնք, իր առաջին աշխատութիւններուն նման, երբէք չեն հիմնուիր զրական վիճակի, հասարակաց բնագոյններուն, և ընկերութեան որոշ իղձերուն վրայ: Ան կը մղորի հեռուոր և վերացական կարգադրութիւններու մէջ, մէկ խօսքով, կ'ուզէ անսահմանօրէն տարածել իր գործը, տիրել ապագային ինչպէս կը տիրէ ներկային: Հոս կ'սկսի եռատիրութիւնն ու երազը:

Ժամանակ մը, իր մասին արդէն կազմել տուած հաւատքին վրայ, կը հետեին մեծ մարդուն նոր տապաւնէզին մէջ կը հաւատան անոր, կը հնազանդին, կ'աշակցին, այսպէս ըսենք, իր քրեհաճայք-

ներուն, որոնց վրայ կը զարմանան նոյն իսկ իր չողոքորթներն ու խարոյները և կը ջատագովեն իբր իրենց, ամենավսեմ յըղացումները:

Սակայն հասարակութիւնը, որ չի կրնար երկար տանն անգէտ մնալ ճշմարտութեան, քիչ յետոյ կը նշմարէ թէ զինք կը քաշեն կը տանին հոն ուր երթալու ոչ մէկ փափաք ունի ինք, թէ կը խաբեն զինք, և թէ չարաչար կը գործածեն: Բիշ առաջ, մեծ մարդը իր իմացականութիւնը, իր գորաւոր կամքը ի սպաս գրած էր հասարակաց իղձին ու հանրային մեծածուծին, այժմ կ'ուզէ գործածել հասարակաց ոյժը ի նպատակ իր անձնական մե-

ծածուծին ու փափաքին, ինք միայն դիտէ ու կ'ուզէ ինչ որ կ'ընէ: Նախ իրանն անհանգիստ կ'ըլլան, յետոյ կը ձանձրանան, ժամանակ մը մեղկորէն կը հետեւին անոր՝ ակամայ, յետոյ կ'ապստամբին, կը տրտնջան, և վերջապէս կը բաժնուին:

Մեծ մարդը կը մնայ առանձին և կ'ընկճի, և ամէն ինչ որ խորհած, և կամեցած էր առանձին, այսինքն իր Զոլէ ծերուն զուտ անձնական և վերացական մասը, իրեն հետ կ'իյնան:

Guzot

Թարգմ. Գ. ԷՍՏԼԵԱՆ

Ամասիա

Պատմական

Աշխարհի Յեղափոխական Մեծ Շարժումները

Դ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԵՂԱՓՈՒՄՈՒԹԻՒՆ

«Մարդը ազատ ծնած է, և ամեն տեղ շրջակեցումէ է»:

Ժ. Ժ. ՌՈՒՍՕ

Թէ ինչու համար երկրի վեհապետները այսօրոք բոլոր իշխանութիւն ու խոշոր հեղինակութիւն ունեցեր էին իրենց հպատակ ժողովուրդներուն վրայ, ասիկա շատ անբնական ու զարմանալի չի պիտի թուի մեզ յայտ, եթէ աչք դարձրնենք Թագաւորներու աստուածային իրաւանց վարդապետութեան պատմականին վրայ. այդ ատեն ա՜ն խորունկ հասկայողութեան մը պիտի կրնան գալ քաղաքական յեղափոխութեան պայծառներուն ու արդիւնքներու նկատմամբ:

Նախնական ժողովուրդներու գրեթէ բոլորին ալ պապութեանց մէջ կը տեսնենք որ, Թագաւորները առհասարակ կառավարած են իրենց հպատակները միայն Աստուծային իրաւունքով: Ինչպէս,

յունաց Թագաւորները կ'ըլլէին սուր ուժանք ունեցող զինուորական ժողովուրդներու ժողովուրդներ իրենց ժողովուրդին կողմէ կը նկատուէին Աստուածային բնութեան մասնակիչ էակներ, և անոնց մէջ ոմանք ալ, ինչպէս Ռամեսս Բ, նոյն իսկ աշտուած են իբր Աստուածներ:

Հրէաստանի մէջ Թագաւորը Տէրոջ օժեհուն էր և կը կառավարէր իբր անոր փոխանորդը երկրի վրայ. Հռոմէական կայսրերն անգամ, Արևելքի ժողովուրդներուն համար, հասարակ մարդոցմէ տարբեր գերբնական էակներ կը համարուէին և այդ իսկ պատճառով տաճարներ ալ կը կանգնէին Աստուծային կեսարներու և Օգոստոսներու ի պատիւ: Դայէ՛ք Բաբելոն, Ասորեստան, Պարսկաստան ու

Չիրաստան, և այն տեղերը պիտի տեսնէք վեհապետները ժողովուրդներու խորունկ պաշտանքին գլխաւոր առարկաները դարձած. հոն թագաւորները Աստուածորդիներ են և իրենց կոչարութիւններն ալ երկնային կայսրութիւն:

Բայց ինչ հարկ այնքան հեռուները երթալու. առնենք ժիջնադարեան չրջանը, ուր գէպքեր ու գէճքեր աւելի յատկորէն կը պարզեն վերոյիշեալ վարդապետութեան ժամանակակից բնոյթը:

Գիտենք թէ Պապիրը կը կառավարէին կամ կը նվաճուորէին իրենց ժողովուրդները Աստուծային իրաւունքով: Ամեն ոք կ'ընդունէր թէ անոնց պաշտօնն ու իշխանութիւնը աստուածային ծագում ունէին, թէ պապերը Աստուծոյ կողմէ ընտրուած էին կառավարելու համար:

(*) Բայց երբ կարգը եկաւ քաղաքական ու կրօնական իշխանութիւններու իրաւասութեանց սահմանը ճշտելու, քանի որ պապեր ա՛յ սկսեցին ինչո՞ւնիսկ թագաւորներու և կայսրերու վրայ իշխել, և հետևաբար նախ Գերմանական կայսրեր և ապա Ֆրանսական թագաւորներ թօթափելու համար իրենց վրայէն պապերու անասանելի լուծը, շարունակական կռիւներ մղեցին անոնց դէմ: Այն ատեն անա՛մընչդեռ մեկ կողմէն պապերու կուռափիլիները չեղանելով չեղանցին անոնց հեղինակութեան աստուածային ծագումն ու տանտնութիւնը, միւս կողմէն ալ կայսրերու զուտակեցները իւր հակազդեցութիւն՝ չորս կողմերը սկսան քարոզել թէ ասոնց իշխանութիւնն ալ նոյնչափ աստուածային ծագում ունի, և հետևաբար անոնք ալ իսկապէս պապեր են և պապերէն:

(*) Արդեօք եղբւր յի յայտարարե՞ց միջնորդական Հայ կարողի պատիրարքը՝ Թերզեան, երբ քաղաքացիները ստացած քե ինք իր իշխանութիւնը երկինքէն առացած է, և ո՛չ քե ժողովրդիցէն:

Մ. Յ.

իրենց քաղաքական տիրապետութեան մէջ, ինչպէս պապերը կրօնական տիրապետութեան մէջ:

Վերածնունդի տնտեսական և քաղաքական ճաճեալ ալ իր De Monarchia ին մէջ կրտթէ՝ կայսրն ալ պապին չափ Աստուածային իրաւունքով կ'իշխէ:

Անա այսպէ՛ս երեւան եկաւ թագաւորներու աստուածային իրաւանց վարդապետութեան նորագոյն ձևը:

Կրօնական յեղափոխութեան չրջանին մենք տեսանք թէ ո՛րքան սուր հանգամանք ստացած էր ապստամբ ազգերու աշխարհական կառավարիչներուն արդար կռիւը Պապական Աթոսին դէմ. մանաւանդ երբ օրուան Պապը բանադրեց հերետիկոս թագաւոր մը և յորդորեց անոր նպատակները որ անոր դէմ ելլեն, այն ատեն կայսերական զօրքներ թէ քարոզիչներ՝ ամէն կողմ տարածեցին այն գաղափարը թէ՝ «սխալ է և անզգամութիւն թագաւորներու գէմ անհաղանդ լղջնալ կամ ապստամբիլը, ինչու որ անոնք ալ աստուածային իրաւունքով եկած են կառավարելու իրենց ժողովուրդը»:

Կրտսեանէք թէ ո՛րքան բնական ճամաղ մը յառաջ եկած է այսպիսի գաղափար մը, որ քանի գնաց զօրացաւ ժողովուրդներու մէջ, և անոր հետ՝ խորացէ՛ւ արտատաղաւ նաեւ կրաւորական կոյր հնազանդութեան առաքինութիւնը նպատակներու սրտին մէջ:

Սակայն այս ժամանակաշրջանի թագաւորներն ու իշխանները փոխանակ իրենց յանձնուած իշխանութիւնը միմիայն իրենց ժողովուրդներուն բարօրութեան ու երջանկութեանը համար գործածելու, փոխանակ իրենց պաշտօնը տեսակ մը մատակարարութիւն, և ինքզինքնին ալ մատակարարներ նկատելու, մէկ խօսքով փոխանակ Մեծն Ֆրետերիկոյ պէս «ես իմ ժողովուրդիս առաջին սպառաւորն եմ» յայտարարելու, ընդհակառակը, անոնցմէ

չափեր դառնաճանկով իրենց ճշմարիտ կոչման կարծեցին թէ իրենց հպատակները ստեղծուած են միմիայն իրենց օգտին համար, և իրենց թագաւորութիւններն ալ իրենց անձնական սեփականութիւններն են, և հետեւաբար այս օրինակ դատապարտելի համոզման արդիւնքները եղան այն բոլոր պատերազմները, որոնք ծագում կ'առնէին կամ իրենց անձնական դժուգ ատկութիւններէն, կամ անյազ փառասիրութիւններէ և կամ ժառանգական սուրբինակ հաշիւներէ, ի զին հապարաւորներու անմեղ արիւննորուն: Այլ ինչպէս ազգեր ու ժողովուրդ-

ներ չի գգուէին ու չի լեցուէին այսպիսի թագաւորներու կառավարութեան դէմ, և ինչպէս չի մերժէին անոնց իշխանութեան աստուածային հանգամանքը. այս պիտի ապօրէն պատերազմներն ու անհուն դուրժելի զեղծումներն էին անա որ վերջապէս եկան վարկաբեկել թագաւորներու աստուածային իրաւանց վարդապետութիւնը (The Doctrine of the Divine Right of Kings.) և անոր տեղ հաստատել ժողովուրդի իշխանութիւնը՝ Քաղաքական Յեղափոխութեան շարունակական ու անդիմադրելի պայքումներով: *

Մարգուան ԹԱԴԷՍՍ ԵՍՍԵՆՍ

ԳԱԻԱՌԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԵՐԹԻՍ ԱՐՏՕՆԱՏԵՐԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Նախորդ թիւի մեր ծանուցման համաձայն, Մարտ 18ին կիւրակի օրը թերթիւն արածնատէրին՝ Հայկազուն էֆէնտի թապալպեանի դէմ ընդէ. դատախազի կողմէ բաժնուած դատը տեղի ունեցաւ ժամանակէն շատ առաջ հետաքրքիրներու խումբն բաղնութիւն մը լեցուած էր դատարանը: Ժամը ինն ու կէսին սկսաւ դատաւարութիւնը. Նախ կարդացուեցան դատի կոչուելուն շարժառիթները ներկայացնող գրերը: Բոլորին պարունակութիւնը այն էր թէ թերթիւն 7 և 8ը թիւերուն մէջ տպագրուած են յէն վէրէտուն պէյին յօդուածները նրատարակելով իւր թէ ուղուած է Իսլամութիւնը անարգել:

Թերթիւն արածնատէրը երեք քառորդ ժամ տեսող փատաացի ու պերճախօս պաշտպանադականով մը բացատրուելով թէ նախ այդ յօդուածը «Բիւզանդիան»էն թարգմանուած է և դարձեալ նոյն յօդուածը «Րահմա»-ի մէջ հայատառ թուրքերէնով նրատարակուած է և

ուէ ուշադրութիւն չէ գրաւած Պոլսոյ նման պատերազմական աստեան գտնուող տեղի մը մէջ իսկ: Յետոյ յայտնեց թէ այդ նրատարակելով ուէ կերպով Իսլամութիւնը անարգելու միտք չէ ունեցած, ինչպէս նաեւ այդպիսի մատգրութիւն չէ ունեցած անոր հեղինակը, քանի որ ան իր խօսքերն Իսլամութեան չուղղեր, այլ ուղղակի այն անպատասխանատու անձերուն՝ որոնք իրենց մոլեռանդութենէն կոյրցած «Ճիշտ» նրապարակելով արատաքին ու ներքին կնճռատութիւններու պատճառ կը դառնան: Այս առթիւ «Րահմա»-յի մէջ նրատարակուած Բրիտանոնեաներ անպատուող, չէյի Պաղատարի մէջ կոչը կարդալով, յայտնեց թէ անա այսպիսի անպատասխանատու ու

* Մեր ընկերացողները տակէ վերը հետգնտե պիտի տեսնեն յաղաքական յեղափոխութեան ընդարձակ տաւմին յաղորդական պատկերները: Ինչպէս, Անգլիական յեղափոխութեան, Ամերիկեան, Ֆրանսական . . . Իտալական, Ռուսական, Հայկական, Չինական ևայլն յեղափոխութիւնները:

Ի. Յ.

անքաղաքագէտ անձերու ուղղած է այդ գրութիւնը հայրենաւոր հեղինակը. վէլէտին պէյ որ բռնապետական չրջանին իսկ աքսորաւայրերուն մէջ ցոյց տուած է հայրենասիրական մաքուր զգացում մը:

Տրուած փաստերը բաւարար համարուելով Ընդհ. դատախազը՝ Ա. — Բիւզանդիանէ եղած թարգմանութեան ճշտութեան ստուգուիլը, Բ. — Որուն հասցէին ուղղուած ըլլալը ճշտուիլը, Գ. — Միւթէսարփութենէն այս դատի մասին եկած թէղքերէն մէջ Օգոս. ամսուան մէջ ներքին գործոց նախարարութենէ եկած հրահանգի մը համաձայն դատի սակ առնուիլը յիշատակուած էր, այդ հրամանին ինչէ բաղկացած ըլլալուն հասկնալու պահանջէ դատարանէն:

Ժամը 10:00ի առին դատին շարունակութիւնը Ապրիլ 10ին յետաձգուելով. խուռն բաղմութեան մը գործունակութեան մպիտանելուն մէջէն մենեցաւ թիրթրոս արածնաւորը:

Այս առթիւ կը փութանք պատասխանել շարք մը այն համակիրներու ու բարեկամներու նստակներով յայտնած ցաւակալութիւններուն, թէ թիրթրոս արածնաւորը բանտարկուած չէ երբէք. և Ձեր ահա՛ջին այդպիսի գրոյցներ ու սխալ տեղեկութիւններ հասցնողները պարզ զրուարտիչներ ու ստախոսներ են:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՄՓՈՒԱՆՆԵՐՈՒ

Իթթիհատական երեք անձեր իթթիհատի ծանօթ գործունէութեամբք բնորոշեցան Օսմ. երեսփոխան. կը ցաւինք բնիկ որ Բրոֆ. Թումանեանի և Իսմայիլ Հազգր բաշաներու տեղ անխղճօրէն պիտի վրկուին երկրին իրական ցաւերուն ու պէտքերուն անտեղեակ մարդեր: Այս է որդնօք իթթիհատական հայրենասիրութիւնը...

Իթթիհատի և կառավարութեան ձեռք տուած ազդու միջոցներուն պատճառաւ Թումանեան և Իսմայիլ Հազգր փաշա հա-

զիւ 20—25 քուէ շահեցան: Այս առթիւ կը փութանք հարցնել մեր Դաշնակցական եղբայրներուն թէ ինչո՞ւ իրենց երկու քուէներուն փոխարէն իթթիհատէն Թումանեանի համար քուէ չի կրցան առնել, քանի որ իշուր ամբողջ ամառը պիներուն յայտարարեցին թէ այդ պայմաններով համերաշխած են իթթիհատներու հետ: Ուրեմն մեր է... կը շրնորհաւորենք իրենց ազգասիրութիւնը...

ԼՍԱՐԱՆ.

Անցեալ երեկոյ իթթիհատի գլխաւոր մէջ դէպի Պօլիս բրած ճամբորդութեան միջոցին քաղաքս Աայցելող յարնի վերընտրուած իթթիհատական մեպոսը Ուպէյտուլան էֆ. բանախօսութիւն մը տուած է: Այդ բանախօսութեան ընթացքին չէ քաշուած յայտնելու թէ հայերուն չարարութեան պատճառը, իրենց աքերը մշտ Եւրոպայի յառելին եղած, իսկ ներկայիւ երբ յուռաւորած են անկէ եկած ու մօտեցած են մեզի, բայց ստակալին մեզմէ երեք աստիճան վերը կը գտնուին, պէտք է մեզի հաւատարմեղ այդ երեք աստիճաններէն վար առնելով, իթթիհատներու հասցէին ա՛լ կարգ մը զրպարտութիւններ լրած ու անվայել լիւզունիք գործածած է: Այս բանախօսութիւնն ունկնդրող քրիստոնեայ ժողովուրդները կը մեկնին բոլորովին վշտացած, իսկ Հայկազուն էֆ. Թապիպեան բանախօսութենէ վերջ պաշտօնական մարմիններու ներկայութեան փութալով բուն կերպով կը բողոքէ հայութեան հասցէին ուղղուած զրպարտութիւններու դէմ: Նոյն ընթացքին մէջ կը գտնուի Յ. էֆ, Խարմանեան ալ: Աչքերնին լոյս մեր Դաշնակցական եղբայրներուն...

ԲԱՋՈՒՆԻ ԳԵՂԱՐՈՒԵՍԱՆՈՑԻ ՀԱՆԴԵՍԸ.

Մարտ 27ին քաղաքիս մէջ գոյութիւն ունեցող Բաջունի Գեղարուեստանոցի վրկայականներու բաշխման հանդէսը տեղի

ունեցաւ, ուր յաջորդաբար բանախօսեցին Միւթէսարը՝ Ահմէտ Մաճիտ պէյ, Հ. Թապիպեան Գ. Սթէշեան էֆ.ներ և Օր. Սուլթան: Բանախօսութիւններէ յետոյ վկայականներու բաշխումը եղաւ և 20 օրիօրդներ վկայականներ ստացան: Ասկէ վերջն ալ վիճակահանութիւն մը տեղի ունեցաւ: Քաջունի վարդապետին արուստին մեջ ունեցած հմտութիւնն ու ցոյց տուած յամառ աշխատութիւնն իսկապէս գնահատելի ու շնորհաւորելի էր: Յուշագրուած ձեռագրածները սակէն արուստէն հասկցողներու խորհրդանշաններու համար տրամադրուեցաւ: Մեր ինդակցութիւնները իր յաջողութեամբ համար:

ՍՐԲՍԳՐՈՒՄ.—

Մեր յարգելի աշխատակցին Տեար Մ. Վարժապետեանի՝ թերթիս ԱՌդ. թիւին մէջի «Մարտունի Կանոնց զարգացման միութեան պաշտօնական երգը» ստանաւ: Եր. Գ. աստի՛ն երկրորդ տողին մէջ «էր չի վայելէ»-ը լրացմամբ «էր կը վայելէ» եղած է:

ԱՆՀՈԳՈՒԹԻՒՆ.—

Կէզլիկէն Երզրէանցի Հալիլն Կ/ը Բէմիւ 8 օրուան բանտարկութեան կը դատադատուի: Հալիլ իբր իր կէնը Էմինէ անուն կին մը վարձելով կը տանի կառավարութեան կը յանձնէ: Վեց օր վերջն է որ եղած ինքապաշտի մը վրայ Էմինէն հանուելով Բէմիւն բանտ կը բերուի: Պաշտենդութիւնը զեղծաբայնելու զէմ օրինական միջոցներու չէ զիմեր կըսուի, չենք գիտեր ինչո՞ւ:

ԺԱՄԱՆՈՒՄ.—

Քերթիս խմբագրներէն Յարութիւն էֆ. Պարտամեանն որ ժամանակէ մ'ի վեր անհա սակաւ գործով Ռուսիա կը գտնուէր, անցեալ օր տեղս ժամանեց: Խմբագրական մարմինս իր ինդակցութիւնները յայտնելով բարի գալուստ կը մաղթէ: Անաթոլիոս գլխի՛ն ուսուցիչներէն բաղմունուտ Բրոֆ. Յովհաննէս էֆէնտի

Մանիսաճեան Զատիկ տաթիւ քաղաքս այցելելով՝ քանի մը օրուան արձակուրդէ վերջ իր պաշտօնատեղին վերադարձաւ: Բարի գալուստ և մեկնում:

ԻԹԻԼԱՅԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ.—

Իթիլաֆական կարող գործիչ Շէվքէթ պէյ տաթի մ'առաջ հոս եկած էր բրօզականդի համար, կառավարութեան կողմէ զատի տակ առնուելով զինուորական հակադրութեամբ Սաման ու անկէ ալ Պօլս զրկուած էր: Այս անգամ իր դատը Եւգենիոյ դատարանին առջև առնուին ու լուծուած լլկալուն, յիշեալը զարճեալ զինուորական խիստ հակադրութեան տակ տեղէն անցնելով Եւգենիոս տաթին, և երէք օր վերջ կրկին զինուորական խիստ հակադրութեան ներքե վերադարձուցին Պօլս: Ինչ էր արդեօք իր անքաւելի մեղքը...

ԱՆՁԳՇՈՒԹԵԱՆ ԶՈՀ.—

Մէճիտ Էպիւլի ճախու չինութեան աշխատող գործաւորներէն Ստեփան Շահինեան և Սերտապի Տիգրան քար պայթեցնելու համար վառօթ լեցուցած պահուն փոխանակ փայտէ գործիքով վառօթը տեղաւորելու երկաթէ գործիքով լրած պահինուն՝ քարը կայծաւելով վառօթը կը բռնկի և ստեփանին ճախ ձեռքը ծանրապէս կը վիրաւորուի, և երկու աչքերը կը կուլնան, իսկ Տիգրանին աչքին մէկը միայն վնասուած է: Երկուքն ալ Մարդուան Անաթոլիոս Հիւանդանոց փոխադրուած են զարմանուելու համար:

Այս առթիւ պարտք կ'զգանք գնահատել այդ ճամբուն չինութիւնը ստանձնող Տիգրան էֆ. Տէլլապեանի վիրաւորեալներու մասին ունեցած հոգածութիւնը:

Արտակա՝ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱՊԻՆԵԱՆ

Խմբագրապէս՝ ՄԻՆԱՍ ԻՓԷՔՃԵԱՆ

Տպ. ՅՈՎ. ՆԱՆԵԱՆ, ԵՒ ԵԱՐՏԵՄԵԱՆ

مکتبک ۱۹ طلبانسه توزیع دیپلومه و مکافات
زینتی اجر اولمشدر زینت مذکورهده متصرف
سمادتلو احمد ماجد بك افندی ایله عسکری قوه
ماندانی میرالای بك افندی و مشافرة شهرمزده
یونان کوبری حوضه و مجید اوزی قائمقاملری
بکر و ر چوق سائر ذوات کیرام حاضر بولمش
لردر احمد ماجد بك افندی صناعی قیسمه
دائر بك واقفانه بر نطق ایراد بیوردیلر کذا
حایقازون افندی طیبیان ایله ذوت سائر
طرفندن دخی نطقلر ایدلمشدر.

غزته من نشر ایدیلور ایکس استخباراتمه
کوره مبعوث محترم عبیدالله افندی حضرتلری
صوک دفعه اتحاد و ترقی قسملونده بر قونفرانس
دها ویرهرك اولکی قونفرانسلمرنده ایراد ایلدیکی
بعض مطالعاتک یاگلش اکلشلمش اولایقنی بالیدار
ارمنیلره عائدقسمنی تصحیح بیورمشلمسایدلرله
کنیدیلره شو سئوالی ایدلم عجا پروغراملریک
اتحاد عناصر فصلنده ارمنیلردن ماعدا خرسیتان
وطداشلر قادرو خارجی می برانلمشدر ؟

کچنده قونفرانس ویرمکلیکن منع ایدیلرک
تحت الحفظ استانبوله کوندربان اختلاف و حریت
فرقه سی مرخصلمردن شوکت بك ایله عبدالله
ضیاءالدین افندیلر حقنده اقامه ایدیلان دعواک
پوره مدعی عمومی ممانکنکجه توقاته نقل دعوی
ایدیش اولمقله بنه درسعادیدن توقاته سوق ایدیل
مشلر ایدی . بو کون مومی الیه افندیلر یکیدن
توقادن استانبوله تحت الحفظ سوق ایدیش
اوزره اماسیه به مواسلت ایدیلر .

سیان و اعتراف ایشلم بو قزل یالانی رد ایله
آئیده کی ایضاحاتی ویردم.

اولا — بو اتفاق فرقه مزجه اختلاف فرقه
سک پروغرامی تدقیق ایلهرک مذکور پروغرا
مک دیگر فرقه پروغرامدن ملک و وطن ایچون
دها منفعتی اولدیغه قانع اولدقدن صکره عقد
ایدلمشدر.

نایم — عبیدالله افندی قونفرانسلمرنده کر
جه اختلافی فرقه سی و پروغرامی علیهنده بعض
اعتراضاتده بولندیلر ایسده مذکور پروغرامک
بطلاتی اثبات و ایضاح ایلهرک مقنع و دلیل
کوسترمه مذکوری محالده فصل اولورده بنم کبی
اجتهادی بر معلومات تامه به استناد ایتدیرن بریسی
اوله سی قول مجردده قالان مدعیاته قایلملره
اجتهادی و هر کسجه معلوم اولان ثبات و مناسقی
انکار ایدر ! بن او ملاقاتده عبیدالله افندیست
بعض ادعایینه اعتراض دخی ایلهرک افندی مو
می الیه قبول ایتدیرمش ایدم

بو یالانی اوبدورانلر بهوده زحمت بیورمشلر
حایقازون طیبیان

شئونات لوا

اماسیه ملحقانی انتخاباتنده اتحاد و ترقی جمعیتی
نامزدلری اولان عارف فاضل و حاجی حافظ
مصطفی افندیلر ایله محمود بك زاره حسن بك
احراز اکثریت ایله مبعوث انتخاب ایدلمشلمردر
مومی الیه یاقنا درسعادته حرکت بیوره حقلر
شهرمزده قاچونی افندی اتان صناعی

ایلیور ایسه کده مقاله کزک آئیده کی فقره سنه قیسه
بر جواب ویره جکر . دیورسکرکه : «جهاد...»
خرستیانلرده بر امر دینی در»

بز بو نوع بر امرک خرستیانلق دیتده مو
جود اولدیفنی بیان ایلرز. خرستیانلقده جهادی
«اسلامیتده کی معناسیله» امر ایدن هیسج بر کلمه
بیله یوقدر . حتی انجیل شریف بونی منع دخی
ایلشدر . بناءً علیه بو فکریکزی عموم خرستیان
لقی نامنه رد ایلرز . بز عثمانلی خرستیانلر جهاد
مقدس نامیله دکل محافظه وطن نامنه اچیلان مح
رمه به حسابات وطنپرورانه ایله اشتراک ایلز و
ایلکده بز .

جهاد مقدس کلمه سنک اورته به قوللشدن
خرستیان وطنداشلر بکرک نیچون راحتسز او.
لدقلرینی سئوال ایده یورسکر . عجیبا صحیحایی
بونک سینی اکلامیورسکر . اوله ایسه بو راحت-
سزلفک حکمتی شیخ عبدالحق بغدادینک ترکیه
«اجتهاد» غزته سنک اوچنچی نسخه سنده نشر
ایلدیکی «اسلامک خرستیانلقه صوک سوزی» نام
مقاله نک مطالعه سنده کوررسکر .

مقاله کزک صوک قسمنده کرچه راحتسز اقلر
یتزک نوعی تعداده قیام ایتمش ایسه کرده نیجه بو
تعدادده دها چوق نقصانلریکز واددر .
حایقازون طیبیان

عکس صداده آماسیه لی ژ. ف. یه
مجهول و غیر مسئول شخصلرک

جاهل قلملرینه مقابله ایتمکده معذور بو
لندیغمز بیان اولنور.

شهریمزه تشریف بیوران آیدن مبعوث
محترمی عیدالله افندی مارت ۲۹نجی اقشامی اتحاد
و ترقی جمعیتی قلوبنده ویردکاری قونفرانسه
ترکیاده بردن زیاده فرقه تشکله لزوم و امکان
اولدیفنی بیان و حریت وائتلاف فرقه سی علیه
نقل کلام ایله بعض مطالعاتده بولندیلر ایسه ده
ظنمزجه بو ادعا بختلری موافق منطق دکلدی.
بز عیدالله افندیدن دها فاضلانه و عارفانه
مطالعات بکار ایدک .

هله ترتیب کرده لری اولان پروغراملرینک
اتحاد عناصر فصلندن بحث ایدرکن اتحادسزلری
موجب اوله جو افکار و تعبیراته دوشملری
تأسی مادی اولدی.

تکذیب

بیلمم که نه کی عادی بر مقصدله بعض کیمسلر
شو یولده بر یلان اویدورمشلر . بکن کون
عیدالله افدینک اتحاد و ترقی قلوبنده کی قونفران
سلیخی متعاقب کندیسيله ملاقاتزده کویا ائتلاف
فرقه سی و پروغرامی علیه کتوردکاری دلا-
ئلدن متأثر هنجاقیان فرقه مرک ائتلاف فرقه سیله
اتفاقنده خطا ایلمش اولدیغمز قناعت کتورمش
وارتی ائتلافی ترک و اتحاد ترقی ایله چالیشه جغمزی

مذكور حیات اتحادك ادراكنه كرجه موافق دیمكدر لکن فرقهك حكومت مطلقه سی ایدی و یاخود هر شئی اوله بیلیری ؟

امور مملکت حقنده اقوامك جریان و قوتلرینك اورته یه کلمه سی و مقصدلرینك دخی سر بستانه ایرادینی تجدد مملکتك مالک ایتکده ایکن مطلقیت میال و تصویری فائده لی اوله بیلیری ؟

ترکیا فرانسه دکلدر ، عصر حاضر دخی فرانسه نك زمان انقلابی دکلدر . او زمانلرده مختلف فرقه لر اوزون و قانی مصادماتده بولندیلر فقط الیوم ترکیا خارجدن بو قدر دوشمنلر ایله احاطه ایدلش ایکن اوله ضربه لره تحمل ایده بیلیری ؟

ژانویه لر کندی مملکتلرنده میداننه کنه بیلر لر و انلرک او دورده کی فعالیتی شمیدیکی ترکیایه نقلی حکمت سیاست عد ایدیه بیلیری ؟ ترکیانك امر تجددی بتون قونلرک و فرقه لرک سر بستانه ظاهر و سر بستانه عاملی اولمیرینی طلب ایدر . چونکه تجدد ایدن بر مملکت ایچون ایلک و اهم شرط بو در . اگر اتحاد شرائط مذکوره یه رعایت ایتیمور ایسه یاکییور . بو درجه ایلرلش اولان حیاتك فکری نحو ایدیه مز . مع التاسف اتحاد ایسه او فکرک (حیاتك) ازاله سنه قیام ایله الیم تجربه لر پاتقده در (نور اشخار حدن ترجمه)

صباحکولیان

عکس صداده اوزی طوغری قرداشمزه

غزته کز ۴۸۲ نومرو لی نسخه سننده نامه کندی نك ذاتی اثبات ایلشدر .
خطاباً یازمش اولدیفکر مقاله کرده یکن ولی الدین مقاله کرک دیگر قسمنه کاندکده بن ذاتکری بکک شخصنه عائد تجاوزانکره مداخله ایلشکلک جدی کورمک ایستر ایدم انک ایچون رجایدرم موقعنده دکلسمده مومی الیهک مقاله کردن خبر که بعدما جدی بولونکر برادر ؛ بنده اولمیان بر طاقم عالی صفاتی بکا ویرمکله بلکه عادی بر اکلنجه ترتیب ایتک ایستورسکر لکن او نوع اکلنجه لری یازمقه غزته مزک سطرلرینی اچیمه سه ایدم امین اولکزر که سره مناسب بر قیصری بویایی ترتیب ایدر ایدم .

ایلس ایکن بو مسندی حق و حقیقت اوغورنده محقیر ایلده رک سیواسه نفع ایدلمکی ترجیع ایلشکلک قدر عالی بر سیرت و منات قلبیه اظهار ایله
مقاله کرک جهاد بحثی — بر جهاد مقدس حقنده شمذیلک هیچ بر مطالعه بیان ایلیمه مملک موقعنده بولندیفمزدن او بخشیدن صرف نظر

امانت‌خانه

طشره منادیس

برخی سنه

۳۰ مارت سنه ۳۲۸

نومرو ۱۲

شرائط تجدد

ترکیاتك داخل حیات ستایه‌سنده الیوم مشاهده اولن احوال حزن اشتمالنده غیر طبیعی دنیله چك بر شئی یوقدر، چونكه احوال مذکوره اونه نبرو اول صورتله قوروش و اول صورتله ایلمولمکده در. یکی حیاتك هر حاله بر طاقم تزلزله هدف اوله جفی طبیعی اولوب سیاسی تزلزلکده حیات اقوامه بر علامت اولسی حسیله قطع امید ایده چك بر حاله یوقدر.

مملکت اصولاً تعالیی ضمننده فوق‌العاده شوون بر فرقنك دوره اولی‌ده ترکیایه رهبر اولسی مملکته عادتاً بر فسادت اولدی. کیفیت بو حاله ایکن شوالیم احوالک تسلسل و توسی ایتسه غریب کوريله من. بر مملکت دوره مشروطیته کیردکن صکره دروننده کی قوه موجودنك ظهور یته مساعده ایدلکجه او مملکتك ترقی و تعالیی‌ده تأمین ایداش اولور. فقط هر نه‌ده اولسه فکر (حیت) منع ایدلر و محوی‌ده قابل دکلدر، عبدالحمیدك تختدن ایندیرلسی ایتسه بو حقیقته بر مثالدر.

شو حاله اتحاد اظهار ایلدیکی بونجه متانت فوق‌العاده یله عجیباً فکرک (حیاتك) معنی تصور ایدلیرمی؟ فرض ایدلم که غالب بر اکثریت مالک اولدقن صکره مجلس مبعوثانی‌ده بر فرقه آیتسه تجویل ایتسه مسئلهك حلی عجیباً او صورتله ختام بولورمی؟ مجلس مبعوثانده سلاتیک قونقره سنک شکل و اخلاقی کسب ایتسه بونکله مقاصدن هانکیسنه واصل اولایلیر؟ جوابی درکاردر.

الیوم ترکیاده ترام ایدن مسائلک شکل و ماهیتی او قدر مشکل و مرکب‌درکه شوون بر فرقه نک ید و واسطه سیله من جهة حلی ممکنسزدر. اتحاد هیج بر وقت تاریخ عمومینک قواعدینی تبدیل ایدمیه چکی کی اجتماعی بر طاقم قواعد جدیده ایلده ترکیاتك اداری و اقتصادی دستوری تنظیم ایدم. وطنک خیری ایچون تجسم ایدن بر فکر و حیاتك محوی غرضیه فضولی جهدلر ایدوب افراطه دوشمکدن ایتسه متنبه اولمق الزمدر.

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ .

Զօրութ. — Արժ. Տ. Ա. Գինյ. Շնորհակալութիւններս մէկ ու կէս մէճիտ ալ գանձեցինք :

Սունկուրյու. — Հ. Ս. 85.50 դրշ. Զիւլ.էն պիտի գանձուի : Մէկ ֆօրմա այս թիւ կ'ստանաք : Առանձին կը գրուի :

Սունկուրյու. — Ա. Թ. Դրամը ժամանակին գանձուած է :

Սերաստիա. — Ա. Ա. Այդպէս պէտք չէր որ ըլլար, ինչ որ է, վերջին կարգադրութեանդ կ'սպասենք :

Քէօթահա. — Հ. Չ. Դրամը ստացանք : Ձեր փափաքին համաձայն կը կարգադրուի :

Դահլիք. — Ա. Ե. Ձեր ուզածը այս թիւ ղրկուեցաւ :

Սարա. — Ս. Դ. Հ. Պ. Խ. Ձեր նամակին համաձայն կարգադրուեցաւ :

Էրպաա. — 2 նոր բաժանորդներուն թերթ ղրկուեցաւ :

Կ. Պօքիս 12 | 23 Մարտ 1942

ՏՀՐ

Մեծանուն Դերասանադետ Մնակեանի Յշտամունայ Յորեղեանին արժանաւայել ու արդիւնաւոր մասնակցութիւն մը կարեւոր տնկնալու մասին, հեռաւոր բազմաթիւ համակիրներու կողմէ արտայայտուած ջերմ փափաքին գոհացում տալու համար, Պօլսոյ Կեդրոնական Կարգադիր Մասնախումբա որոշած է, ի պատիւ վաստակաւոր Յորեղեանին՝ տեղի տնկնալիք հանդէսը՝ փոխանակ 4 | 14 Ապրիլի, կատարել Ապրիլ 29 | 42 Մայիսի, Կիրակի ցորեկ, դարձեալ Բերա վարիէթէ թատրոնին մէջ :

Յարգանքով

Ի ԴԻՄԱՅ

ՄՆԱԿԵԱՆ ՅՈՐԵԼԵԱՆԻ ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԽԱԲԻ
ՆԱԲԱԼԻՍ ՕՀԱՆԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱՊԻՊԵԱՆ

ԱՄՍՍԻՍ.

Ոսկի գորուն եւ սրիճ նաեւ սէշա-
րոյս արհեստական ասամներ շինելու
Ամերիկեան մեքօսը սորվիլ ուզող
բոլոր ասամաբոյժներու կը յայ-
տարարէ թէ ինք պատրաստ է այդ
մէքօսը սորվեցնել նպաստաւոր
պայմաններով :

سیفورطه جی

سیمون قارقیان

آماسیه

آلیسانسه عمر سفورطه سی لانقاشه حریری

سیفورطه قومپانیه لرینک اجتنی در.

مناسب شرائطه هر نوع سیغه .مه اشاری

بآپار. آرزو ایدنلر بر دفعه تجربه ایتسوندلر

چیشیان ارتین انا دکانک اتصلنده باتمانی

۵۰ (الی) بارهیه معدن کوری صاتیور

هر کس فرصتدن استفاده ایتسون.

ՓՈԻԹԱՑԷՔ ԱՆՄԻՋԱՊԵՍ ԴԻՄԵԼ

ԿԱՐԱՊԵՏ ԱՅՎԱԶԵԱՆ

ԶԻՆԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ

ԲԱԼԸԳ ՊԱՇԸ — ՍԱՄՍՈՆ

Կը վաճառէ ամեն կարգի ու ամեն ճե-
սակ՝ փամփուռ 0 | 25 զեղջող : Թող դի-
մեն, բոլոր առիթէն օգտուիլ գիտցողները
վստահ ըլլալով թէ իրենց շահը նկատի պի-
տի առնուի միշտ : ՕՐ փորձեցէք եւ հա-
մոզուեցէք :

ԱՄՍԻՅՈՒՆ

شرائط اشترا
بر سندگی بر مجلد
النی آیهی یارم مجیددر

صاحب امتیاز و
مدیر مسئولی
حایقازون طیبیان

سر محرومی مناس ایپکجیان یاخود

طشره منادیسی

سیاسی فنی ادبی اقتصادی و اخلاقی عزته در
هر اونی بش کونده بر نشر اولنور

نومرو ۱۶

۳۰ مارت ۱۳۲۸

برنجی سنه

محتویات

صبح کولیان افندی

حایقازون طیبیان

• • • • •

حایقازون طیبیان

شرائط تجدد

اوزی طوغری به جواب

آماسیهلی ژ. ف. به

عبدالله افدینک قونفراسی

تکذیب

شئونات لوا

مطبعه مزده ترکیه ارمنیجه روجه فرانسزجه و انگلیزجه ایسانلریله هر نوع اعلانات،
اوراق تجاریه، قارت ویزتله، مکتوب باشلری، کتابلر، غزتهلر و مطبوعاته عائد سائر هر نوع
ایشار غایت تمیز و مزاق اوزره طبع اولیور. مقصد یکنه من محترم مشتریلرمیزی ممنون
قلماق در. هونانیان و یاردیمیان شرکاسی

Տպարանին մէջ Տանկերէն, Հայերէն, Յունարէն, Ֆրանսերէն, եւ Անգլի-
իերէն լեզուներով ամէն տեսակ Ազդեր, Վաճառականական քղեր,
Բարս վիզիթներ, Նամակագրութիւններ, Գրքեր, Թերթեր եւ տպագրական
ուրիշ ամէն տեսակ գործեր խիստ արագ եւ նաւաստան կը տպագրուին:
Միակ նպատակնիս է զոն բողոք յարգելի յանախորդները:

ՅՈՒՆԱՆԵԱՆ ԵՒ ՆԱԲԵՐԱՍԵԱՆ

آماسیهده

مطبعه هونانیان و یاردیمیان